ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ըստ «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի կազմակերպական հիմքը դպրոցի զարգացման ծրագիրն է, որը նպատակուղղված է հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված կարողունակություններով և շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջներով ակնկալվող վերջնարդյունքներով՝ համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորմանը:

«2023-2028թթ. Զարգացման ծրագիրը» մշակված է ըստ Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման ՀՀ կրթության մինչև 2030 թ. զարգացման պետական ծրագրի:

Ծրագրի հիմքում դրվել են նաև Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից հաստատված կրթության առանձին ոլորտների ռազմավարական ծրագրերը և զարգացման հայեցակարգերը, ինչպես նաև Վաղարշապատ համայնքի առանձնահատկությունները :

Հիմք ընդունելով ավագ դպրոցի արդեն իսկ արձանագրված ձեռքբերումները՝ ծրագիրն ուղղված է դրանց աստիճանական զարգացմանը՝ նախանշելով զարգացման գերակա ուղղություններն ու ռազմավարությունները:

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի ռազմավարական գլխավոր ուղղությունը ներդաշնակորեն զարգացած, սոցիալապես գործուն և ստեղծագործ, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորմանը միտված կրթության համակարգի առաջանցիկ զարգացումն է՝ որպես պետականության ամրապնդման և հասարակության սոցիալ-տնտեսական առաջընթացի գործոն:

Իրավիճակի վերլուծությունը հնարավորություն է տալիս սահմանել զարգացման ծրագրի նպատակները: Նպատակը որոշակի ժամանակահատվածում իրականացվող գործունեության սպասվող արդյունք է, այն է, ինչին ձգտելու ենք հասնել:

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ՝

- *Դպրոցի գործունեությունը կանոնակարգող նորմատիվային փաստաթղթերի փաթեթի ստեղծում*
- *Դպրոցի նյութատեխնիկական բազայի հարստացում*
- *Դպրոցի կաբինետների, լաբորատորիաների կահավորում*
- *Դպրոցի երկրորդ և երրորդ մասնաշենքերի, տանիքի վերանորոգման իրականացում*
- *Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական միջավայրի ապահովում*
- *Կրթության որակի ներքին գնահատման համակարգի կատարելագործում*
- *Սովորողների կրթության կառուցվածքի և բովանդակության վերազինում*
- *Սովորողների գործնական հմտությունների զարգացմանն ուղղված ուսուցման ժամանակակից մեթոդների ներդրում*
- *Սովորողների հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդում,ազգային և համամարդկային արժեքների պահպանում և զարգացում*
- *Սովորողների մասնագիտական կողմնորոշման և հետագա կրթության համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորում*
- *Աշակերտական ինքնակառավարման մարմինների գործունեության կատարելագործում*
- *Սովորողների առողջության պահպանմանն ուղղված ուսումնադաստիարակչական աշխատանքների կատարելագործում*
- *Դպրոց-ծնող-համայնք կապերի ամրապնդում*
- *Ուսումնական գործընթացում տեղեկատվական և հաղորդակցական ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործման արդյունավետության բարձրացում*
- *ՏՀՏ մշտապես արդյունավետ կիրառումը դասապրոցեսում՝ ուսուցման որակի բարձրացման նպատակով*
- *Կրթության մատչելիության ապահովում, դպրոցում այնպիսի հոգեբանա-մանկավարժական միջավայրի ձևավորում, որը թույլ կտա յուրաքանչյուր սովորողի իր հնարավորություններին և հակումներին համապատասխան յուրացնել կրթական ծրագիրը, լինել հաջողակ ու մրցունակ*
- *Դպրոցի կառավարման ժողովրդավարացում, դպրոցի զարգացման գործում ծնողների և համայնքի ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացում*

Տեղեկատվություն

ՀՀ Արմավիրի մարզի <<Վաղարշապատի Գրիգոր Նարեկացու անվան հ. 2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի մասին

ՀՀ Արմավիրի մարզի <<Վաղարշապատի Գրիգոր Նարեկացու անվան հ. 2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ը / լիցենզիա Ա N 0644/ 16.01.2003 թվականին գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տարածքային բաժնում: Դպրոցի Կանոնադրությունը հաստատվել է 26.09.2017թ:

- Դպրոցը բաղկացած է երեք մասնաշենքներից
- Դպրոցում առկա են գրադարան, ռեսուրս կենտրոն , մարզադահլիճ, հանդիսությունների դահլիճ , բուժկետ, 3 համակարգչային կաբինետ, դպրոցական տեսուչի սենյակ, մեթոդական խորհրդատվությունների սենյակներ, սոցիալական մանկավարժի սենյակ, լաբորատորիաներ՝ 3/ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության/, ՆԶՊ կաբինետ , պատմության սենյակ, դպրոցի պատմության թանգարան, փառքի սրահ, ԱՐՄԱԹ ինժեներական լաբորոտորիա , բուֆետ, սանհանգույց՝ 11:
- Դպրոցն աշխատում է միահերթ:
- Դպրոցում աշխատում են 37 մանկավարժներ, որոնցից 36-ն ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն, 1-ը՝ միջին մասնագիտական կրթություն:
- Ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը 19,6 դասաժամ է:
- 2022-2023 ուսումնական տարում դպրոցում կոմպլեկտավորվել են 14 դասարաններ, որտեղ սովորում են 336 աշակերտներ՝
  10-րդ դասարաններում /6 դասարան/- 123 սովորող,
  11- րդ դասարաններում /4 դասարան/- 113 սովորող ,
  12- րդ դասարաններում /4 դասարան/- 100 սովորող :

2022-2023 ուսումնական տարվա դասարանների կոմպլեկտավորումը ըստ հոսքերի



- *2009 թվականի սեպտեմբերից դարձել է ԿԳՄՄՆ ենթակայության ավագ դպրոց:*

- *2013 թվականից դպրոցում գործում է ռոբոտաշինության խմբակ*
- *Դպրոցն ունի ինտերնետային կայք / https://schoolsite.am/- ում*
- *Դպրոցի աշակերտական խորհուրդն ունի facebook –յան էջ / Գր. Նարեկացու անվան թիվ 2 ավագ դպրոցի աշակերտական խորհուրդ/*
- *Դպրոցն ունի տարբերանշան /LOGO/*

ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

1. Ապահովել հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան միջնակարգ կրթության շրջանավարտի ակնկալվող կարողունակությունները և հանրակրթական հիմնական ծրագրերի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները՝ նպաստելով հետագա ուսումնառությանը պատրաստ անհատի ձևավորմանը:
2. Յուրաքանչյուր սովորողի հնարավորություն տալ կյանքի բոլոր փուլերում ստանալու իր պահանջմունքներին համապատասխան որակյալ կրթություն:
3. Ապահովել երեխաների ինքնուրույն կյանքի լիարժեք պատրաստված լինելու, կրթության հաջորդ աստիճանում ուսումն արդյունավետ շարունակելու և արժանապատիվ աշխատանքային գործունեության անցնելու նպատակով:
4. Կրթության բոլոր մակարդակներում ամրապնդել դաստիարակության բաղադրիչը: Պետականության դերի գիտակցման, հայրենասիրական, քաղաքացիական և էկոլոգիական ուսուցման և դաստիարակության միջոցներով բոլոր սովորողներին զինել հասարակության կայուն զարգացմանը նպաստող գիտելիքներով և կարողություններով:
5. Կրթությունն իր բովանդակությամբ և ձևերով պետք է համապատասխանի առկա խնդիրներին, ապահովի համապատասխան գիտելիքների, կարողությունների, արժեքների և վերաբերմունքի ձևավորմանը, դաստիարակի հասարակության ակտիվ և պատասխանատու քաղաքացի, որն ունակ է վարել արդյունավետ կյանք, դրսևորել առողջ ապրելակերպ, պաշտպանել սեփական և հարգել ուրիշների իրավունքները, արժևորել սեփական ինքնությունը և առաջնորդվել հանդուրժողականության սկզբունքներով, պաշտպանել ազգային շահը, կայացնել գիտակցված որոշումներ, նպաստել խաղաղությանը և պատրաստ լինել ծառայելու ազգային և համամարդկային խնդիրների լուծմանը:
6. Կրթության բոլոր մակարդակներում անհրաժեշտ է ստեղծել որակյալ կրթություն ստանալու հավասար հնարավորություններ բոլորի համար, ներառյալ՝ խոցելի խմբերի, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, կյանքի դժվարին պայմաններում հայտնված աղջիկների և տղաների: Կրթության ոլորտում իրականացվող բոլոր ծրագրերը, բարեփոխումները, նախաձեռնություններն ու մշակումները պետք է հաշվի առնեն սովորողների առանձին խմբերի և անհատների կարիքները, նախատեսեն դրանց արձագանքման համապատասխան մոտեցումներ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ 1

1. Դպրոցի գործունեությունը.
ա. Ինչ կրթական կարիքներ է այն բավարարելու
բ. Դպրոցի գործունեությունը համապատասխանում է պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին.
գ. Դպրոցի գործունեությունը համապատասխանում է հաստատության ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին:

2. Իրավիճակի վերլուծությունը, ուժեղ և թույլ տեղերը
ա/ Դպրոցի շենքային պայմանները
բ/ Դպրոցի նյութատեխնիկական բազան
գ/ Դպրոցի շենքային պայմանները , նյութատեխնիկական բազան և այլ ռեսուրսները հաշվետու /2023-2028/ ժամանակաշրջանում
դ/ Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինները
ե/ Դպրոցի համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ
զ/ Դպրոցի ուսումնական միջավայրը
է/ Դպրոցի մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումները
ը/ Դպրոցի տրամադրած կրթության որակը
թ/ Դպրոցի կողմից օգտագործվող տեխնոլոգիաները և կիրառվող նորարարությունները
ը/ Դպրոցում առկա հիմնախնդիրները

3.Նպատակների և խնդիրների սահմանում / Նպատակ-խնդիր-գործողություններ-կատարող-ժամանակացույց-պատասխանատուներ-արդյունքների գնահատման չափանիշներ-ռիսկեր-գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ և նյութատեխնիկական պարագաներ-վերահսկողության մեխանիզմներ/

ա/ Դպրոցի բակային հատվածի վերանորոգում և ցանկապատում
բ/ Գույքային հագեցվածության ապահովում
գ/ Որակյալ կրթության ապահովում

ՄԱՍ 2

1. Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման ռիսկերը 2. Դպրոցի կառավարման արդյունավետության բարձրացում
3. Ծրագրի ֆինանսավորման ապահովումը
4. Դպրոցի զարգացման ծրագրի գնահատման չափանիշները, վերահսկողությունը

ՄԱՍ 1

1.ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ԻՆՉ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ Է ԱՅՆ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ

Դպրոցի գործունեության առարկան յուրաքանչյուր սովորողի կրթության կազմակերպումն է՝ հանրակրթական հիմնական և լրացուցիչ ծրագրեր իրականացնելու միջոցով, համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում: Դպրոցի գործունեության նպատակը յուրաքանչյուր սովորողի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է:

Դպրոցը պատասխանատու է՝

1) յուրաքանչյուր սովորողի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և կրթական ծրագրերի իրականացման որակի ապահովման համար.

2) հանրակրթության պետական չափորոշչին և հանրակրթական պետական ծրագրին համապատասխան ուսուցման արդյունավետ մեթոդների և ձևերի ընտրության համար.

3) յուրաքանչյուր սովորողի կրթական գործընթացին առավելագույն մասնակցությունը խթանելու նպատակով ֆիզիկական միջավայրի մատչելիության և անհատական/խելամիտ/ հարմարեցումների ապահովման համար.

4) մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման համար՝ հաշվի առնելով սովորողների տարիքային, ֆիզիոլոգիական ու սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկությունները, հակումներն ու ընդունակությունները, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության և առողջության պահպանման համար:

Բ. ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻՆ, ՀԱՄԱՅՆՔԻ, ՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻՆ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ.

Վերջին տարիներին հանրակրթությունում առկա են ոլորտում համախառն ընդգրկվածության խնդիրներ . դպրոց չհաճախելու ամենատարածված պատճառներն են՝ հաշմանդամությունը, ծայրահեղ աղքատությունը, երեխաների աշխատանքը, էթնիկ պատկանելիությունը և այլն: Հանրակրթության մեջ սովորողների ընդգրկվածությունն ավելի ցածր է հատկապես 3-րդ մակարդակում՝ ավագ

դպրոցում: Հաշվի առնելով, որ հիմնական դպրոցն ավարտելուց հետո համապատասխան տարիքի սովորողների մի մասը ուսումը շարունակում է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, ապա հստակ կարելի է արձանագրել, որ կան հիմնական դպրոցի շրջանավարտներ, որոնք 10-12-րդ դասարան չեն հաճախում: Դպրոցն իր առջև խնդիր է դրել ուսումնառության մեջ ընդգրկելու տարբեր պատճառներով ուսումնառությունից դուրս մնացած սովորողներին՝ ապահովելով ուսումնառության շարունակականությունը:

Հայաստանի Հանրապետությունը 2014 թվականին «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխություններ կատարելով՝ անցել է համընդհանուր ներառական կրթության, և դպրոցը ունի պատրաստակամություն և պատասխանատվություն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման ապահովման գործում՝ համապատասխան բավարար հարմարեցված ֆիզիկական ու ուսումնական միջավայր ապահովելով:

Գ.ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻՆ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻՆ և ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Դպրոցի վերանորոգված առաջին մասնաշենքը համապատասխանում է ենթակառուցվածքներին, առկա են ինտերնետ կապեր, նորմատիվներին համապատասխան սանհանգույցներ / երեք սանհանգույցներում առկա է տաք ջուր/, դասասենյակներն ապահոված են վերջին տարիներին ստացած գույքով:
Առկա են ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության լաբորատորիաներ՝ համալրված նոր գույքով:

Դպրոցի մյուս երկու մասնաշենքերն ունեն վերանորոգման, նոր գույքով կահավորման գերխնդիր:
Դպրոցի անհետաձգելի խնդիրներից են միջազգային չափանիշներին համապատասխան շենքային պայմանների բարելավումն ու նյութատեխնիկական բազայի հարստացումը, որոնք ուղղակի կապ ունեն սովորողների ցուցաբերող կրթական արդյունքի հետ: Խոսքը վերաբերում է ինչպես դպրոցում առկա ենթակառուցվածքներին՝ կոմունալ հարմարություններ, կապի առկայություն և այլն, այնպես և գույքային հագեցվածությանը, անհրաժեշտ պիտույքների և միջոցների հասանելիությանը:

Դպրոցի անձնակազմի, բացառությամբ սպասարկող անձնակազմի, 37 անդամներից 36 –ն ունեն համապատասխան բարձրագույն կրթություն: Ուսուցիչները մասնակցում են պարտադիր ատեստավորմանը՝ ըստ սահմանված կարգի:

Թվային տեխնոլոգիաների շարունակական արդիականացումը ժամանակի հրամայական է դարձնում ուսումնական գործընթացում ժամանակակից

տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) կիրառման ընդլայնումը: Առաջնահերթություն են ամբողջ դպրոցում որակյալ ինտերնետային կապի ապահովման , առկա համակարգիչների նորացման և արդյունավետ օգտագործման խնդիրների լուծումը: ՏՀՏ կիրառումը ուսումնական գործընթացում և, հատկապես, հեռավար/առցանց կրթության ընդլայնման ու զարգացման անհրաժեշտությունն էլ ավելի ընդգծվեց 2020թ., երբ նոր կորոնավիրուսի (Քովիդ-19) տարածման հետևանքով ստեղծված իրադրությունում կիրառվեցին տեղեկատվական և հաղորդակցության ժամանակակից տեխնոլոգիաներն ու էլեկտրոնային հարթակները, որի ընթացքում բացահայտվեցին սովորողների, մանկավարժների շրջանում՝ առցանց աշխատանքի համար անհրաժեշտ ոչ բավարար հմտությունները և մեդիագրագիտության ցածր մակարդակը, հեռահաղորդակցման տեխնիկական միջոցների բացակայությունը/անբավարար որակը:
Դպրոցներում օգտագործվող աշխատող համակարգիչների մեծ մասը ցածր սերնդի են: Առանձին խնդիր է դպրոցի գույքի համալրումը նոր համակարգիչներով : Առաջնահերթություն է նաև դպրոցում լաբորատոր ենթակառուցվածքներից աշխարհագրության լաբորատորիայի ստեղծումը, ինչը կարող է լավ նախադրյալ լինել աշխարհագրության ուղղությամբ կրթության որակի և արդյունավետության բարելավման համար:

2. Իրավիճակի վերլուծությունը, ուժեղ և թույլ տեղերը

Ուժեղ կողմեր	***Թույլ կողմեր***
ա/Դպրոցի շենքային պայմանները	
• *Դպրոցի առաջին մասնաշենքի 3 հարկերը հիմնանորոգված են* • *Դպրոցն ունի լոկալ ջեռուցում* • *Դպրոցն ունի գրաֆիկով ջրամատակարարում*	• *Դպրոցի ցանկապատը հիմնանորոգման կարիք ունի* • *Գլխավոր մասնաշենքի երեսապատման քարեր կան,որոնք խարխլված են և ամրացման կարիք են զգում* • *Դպրոցի բակային հատվածները ունեն ասֆալտապատման կամ սալիկապատման կարիք* • *Դպրոցի երկու մասնաշենքերը կառուցման օրվանից չեն վերանորոգվել / բացառությամբ դահլիճների/, ունեն վերանորոգման կարիք*

բ/ Դպրոցի նյութատեխնիկական բազան	
Դպրոցի վերանորոգված դասասենյակները հիմնականում կահավորված են նոր/ 2015թ. ստացած/ գույքով՝ պահարաններ, ուսուցչի սեղաններ, 160 աշակերտի համար ստացած սեղան-աթոռներով: • Դպրոցն ունի համակարգչային կաբինետներ, ինտերնետ կապեր, գործում է ռոբոտաշինության խմբակ, առկա է առանձնացված կաբինետ, որը 2022թ.-ին համալրվել է Արմաթ լաբորատորիայի նոր գույքով: • Դպրոցի համակարգչային կաբինետում առկա է 22 նոթբուք՝ իր սնուցող սարքերով, 1 էլեկտրոնային գրատախտակ: • Դպրոցում գործում են քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության լաբորատորիաներ, որոնք 2020թ.-ին համալրվել են անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով • 2020թ. դպրոցի ռեսուրս-կենտրոնը համալրվել է SMART հեռուստացույցով • 2020թ .-ին ԿԳՄՄՆ կողմից վերանորոգվել են դպրոցի մարզադահլիճը և հանդիսությունների դահլիճը: Մարզադահլիճը ապահովված է ԿԳՄՄՆ կողմից ստացված սպորտային գույքով: Ըստ անհրաժեշտության՝ դպրոցն իրականացնում է վոլեյբոլի, ֆուտբոլի և բասկետբոլի գնդակներով ապահովման աշխատանքներ: • 2020թ.-ին վերանորոգվել է դպրոցի բուֆետը և կահավորվել է նոր սեղան, աթոռներով:	• Դպրոցը չունի հրաձգարան • Նոր համակարգիչների պակաս • Աշակերտական սեղան-աթոռների ձեռքբերման կարիք • Առարկայական կաբինետների նյութատեխնիկական բազան ունի թարմացման կարիք • Վերանորոգման կարիք ունի ջեռուցման համակարգը

գ/ Դպրոցի շենքային պայմանները , նյութատեխնիկական բազան և այլ ռեսուրսները հաշվետու /2023-2028/ ժամանակաշրջանում:	
2023-2028 թթ. Կունենանք ➢ ամբողջությանբ վերանորոգված, ժամանակակից պահանջներին համապատասխան շենքային պայմաններ, դասասենյակները և լաբորատորիաները կահավորված և ապահովված անհրաժեշտ գույքով և նյութերով: /Դպրոցը ընդգրկված է ՀՀ կառավարության 2021թ օգոստոսի 18-ի հ.1363-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության <<Մինչև 2026թ. կառուցվող, հիմնանորոգվող կամ վերանորոգվող 300 դպրոցների>> ծրագրում/: • Վերանորոգված երկու մասնաշենքերում առկա կահավորված դասասենյակներ, • Կահավորված հանդիսությունների դահլիճ, • Վերանորոգված, գրքերով համալրված գրադարան, • Աշխարհագրության կաբինետ՝ անհրաժեշտ կահավորմամբ: • Վերանորոգված ՆԶՊ կաբինետ	• Աշակերտների թվին համապատասխան նոր գույքով ապահովման դժվարություն
➢ Մարդկային ռեսուրսներ	➢ Մարդկային ռեսուրսներ
• . Դպրոցի տնօրինությունն ունի դպրոցի ղեկավարման և կառավարման անհրաժեշտ պատրաստվածություն, տիրապետում է դպրոցի ուսումնադաստիարակչական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտների ղեկավարման առանձնահատկություններին • Դպրոցի ուսուցիչները/	• Ուսումնական դժվարություններ ունեցող սովորողների խրախուսման և ակտիվացման մեթոդների ոչ արդյունավետ կիրառումը: • Կան ուսուցիչներ, ովքեր դեռ հրահանգողի դերում են, որը սահմանափակում է սովորողի ազատ մտածելու հնարավորությունը • Ուսուցիչները ցանկություն չունեն

բացառությամբ մեկ ուսուցչի/ ունեն համապատասխան բարձրագույն կրթություն: • Դպրոցի գործունեությունը բաց է ու թափանցիկ, աշխատանքի արդյունքները տեսանելի են բոլորին: • Դպրոցը համագործակցում է համայնքի հետ: • Դպրոցը ուսումնադաստիարակչական հարցերում փորձում է ապահովել աշակերտակենտրոն մոտեցում՝ ներդաշնակորեն համադրելով ուսուցման ավանդական և արդիական մեթոդների կիրառումը: • Ուսումնաօժանդակ կազմը պարտաճանաչ և պատասխանատու ձևով կատարում է իր պարտականությունները: • Ուսուցիչներն ունեն անհրաժեշտ պատրաստվածություն, մասնագիտական զարգացման անհրաժեշտ կարողություններ • Ուսուցիչները համագործակցում են միմյանց հետ, որի արդյունքում աճել է ինտեգրված դասերի քանակը: • Պարբերաբար կազմակերպվում է ուսուցիչների համար սեմինար պարապմունքներ, որն օգնում է առաջավոր փորձի տարածմանը • Որպես ավագ դպրոց՝ համագործակցում է բուհ-երի հետ, հատկապես սովորողների մասնագիտական կողմնորոշման հարցերում ➢ **Սովորողներ** • Սովորողներն ունեն հետաքրքրություններ օլիմպիադաների, հանրապետական, ինտելեկտուալ խաղերի, մրցույթների նկատմամբ • Բարձրացել է սովորողների պատասխանատվության զգացումը	տարրակարգ ստանալ: • Ուսուցիչների մի մասը հաճախակի չի կարողանում կիրառել նոր տեխնոլոգիաներ, վարպետորեն համադրել ուսուցման մեթոդներն ու հնարները , որոնք անհրաժեշտ են օրինակելի, ուսանելի և արդյունավետ դասեր կազմակերպելու համար: ➢ **Սովորողներ** • Որոշ սովորողների անտարբերությունը ուսման նկատմամբ • Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաները հաճախակի բացակայում են

• Բուհ–ում սովորելու ցանկություն ունեցող շրջանավարտների տոկոսը բարձր է • Հոսքային ուսուցումը հնարավորություն է տալիս սովորողներին ինքնուրույն հանձնելու միասնական քննությունները • Սովորողները սիրով են մասնակցում նախագծային աշխատանքների իրականացմանը	դասերից աշխատելու պատճառով • Սովորողների ինքնագնահատման օբյեկտիվությունը

դ/Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինները

• Դպրոցում գործում են ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ հանրակրթության մասին օրենքին և դպրոցի Կանոնադրությանը համապատասխան ձևավորված խորհուրդներ՝ կոլեգիալ կառավարման մարմին՝ խորհուրդ և խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդներ, առարկայական մեթոդական միավորումներ, որոնք կանոնավոր կերպով գումարում են նիստեր և կազմակերպում աշխատանքները: • Դպրոցում կան առարկայական 6 մեթոդմիավորում, որոնք գումարում են նիստեր և արդյունավետ կազմակերպում աշխատանքները • Դպրոցը համագործակցում է ծնողների հետ, գործուն մասնակցություն ունի համայնքի հիմնախնդիրների լուծմանը՝ աշակերտներին ներգրավելով այդ գործընթացում որպես կամավորներ • Մեծ ակտիվությամբ գործում է աշակերտական խորհուրդը • Ծնողական խորհուրդը պարբերաբար լսում է տնօրենի	• Դպրոցը չունի հոգաբարձուների խորհուրդ:

հաշվետվությունը դպրոցի հեռանկարային պլանների մասին, առաջարկում է խրախուսանքի ներկայացնել լավագույն աշակերտներին և ուսուցիչներին:	

ե/Դպրոցի համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ	
• Դպրոցը համագործակցում է ԿԳՄՄՆ-ի, ԿԶՆԱԿ-ի, ԳԹԿ-ի, ՀՀ Արմավիրի մարզպետարանի, Վաղարշապատի համայնքապետարանի, ԱԻՆ-ի, զորամասերի, զինկոմիսարիատի, ոստիկանության, բուհ-երի, այլ դպրոցների և այլ կառույցների հետ:	

զ/Դպրոցի ուսումնական միջավայրը	
• Դասասենյակներն ապահովված են անհրաժեշտ գույքով,սակայն դրանք ունեն թարմացման կարիք: • Համակարգչային սենյակներում առկա են աշակերտների միջին խտությանը համապատասխան համակարգիչներ և սարքավորումներ: • Դպրոցում գործում է Արմաթ ինժեներական լաբորատորիա, • Դպրոցում առկա է նոր գրականությամբ համալրված ռեսուրս կենտրոն, գրադարան: • Դպրոցում առկա են քիմիայի, կենսաբանության, ֆիզիկայի լաբորատորիաները՝ ահրաժեշտ լաբորատոր սարքերով: • Դպրոցի մարզադահլիճը վերանորոգված է և համալրված մարզագույքով: Դպրոցում կահավորված է պատմության	• Փորձերի համար անհրաժեշտ քիմիական նյութերի պակաս: • Դպրոցն ունի պարսպապատման և վերանորոգման կարիք: • ՆԶՊ կաբինետը ունի վերանորոգման և գույքի թարմացման կարիք: • Դպրոցի բակային հատվածի մարզահրապարակը ունի վերանորոգման կարիք: • Համակարգիչները ունեն արդիականացման կարիք:

սենյակ, դպրոցի պատմության թանգարան, փառքի սրահ:	

Է/ Դպրոցի մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումները	
Դպրոցի մանկավարժական համակազմը սահմանված կարգով մասնակցում է պարտադիր ատեստավորմանը, ԿԳՄՄՆ և ԿԳՄՄՆ երաշխավորած կազմակերպությունների կողմից իրականացվող մասնագիտական որակների զարգացումն ապահովող տարբեր միջոցառումների:	

Դպրոցի մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել՝

- Կազմակերպման և ղեկավարման մեխանիզմների մշակում,որը պետք է ուղղված լինի մանկավարժների մասնագիտական որակավորման մակարդակի հետագա բարձրացմանը
- Նորմատիվ իրավական և կազմակերպական այնպիսի նախադրյալների ստեղծում, որոնք կապահովեն դպրոցի մանկավարժական համակազմի մեթոդական աշխատանքների որակական բարելավումը:
- Մանկավարժներին աջակցել՝ մշակելու, ներկայացնելու և տպագրելու իրենց մեթոդական աշխատանքների արդյունքների վերաբերյալ նյութեր:
- Կազմակերպել ուսուցիչների վերապատրաստում ՏՀՏ կիրառման ուղղությամբ
- Շահագրգռել մանկավարժներին՝ կատարելու հետազոտական աշխատանքներ, ստեղծել պայմաններ մանկավարժների փորձարարական աշխատանքների իրականացման համար, մասնակցել մասնագիտական որակների զարգացումն ապահովող բոլոր միջոցառումներին

Ը/ Դպրոցի տրամադրած կրթության որակը	
Դպրոցը տրամադրում է հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան որակյալ կրթություն, դպրոցի աշակերտները մասնակցում են դպրոցականների առարկայական հանրապետական, ԵՊՀ և այլ բուհ-երի կողմից կազմակերպած օլիմպիադաներին, աշխատաժողովներին տարբեր մրցույթների և ինտելեկտուալ խաղերի:	Սովորողների զբաղվածությունը երբեմն խոչընդոտում է մասնակցելու օլիմպիադաներին և մրցույթներին:
Դպրոցի դիմորդ- շրջանավարտները ընդունվում են հանրապետության տարբեր բուհ- եր և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ:	Դպրոցն ունենում է երկտարեցի սովորողներ, որի հիմնական պատճառը հանրապետությունից բացակայելն է կամ ուսման նկատմամբ անտարբեր վերաբերմունքը

Ստորև ներկայացվում է սովորողների առաջադիմության վերաբերյալ տեղեկատվություն.



թ/Դպրոցի կողմից օգտագործվող տեխնոլոգիաները և կիրառվող նորարարությունները	
Վերապատրաստված, միմյանց հետ համագործակցող ուսուցիչները իրենց կազմակերպած դասերը էլ ավելի հետաքրքիր են դարձնում՝ օգտագործելով ուսուցման տարբեր տեխնիկական միջոցներ և ծրագրեր /Kahoot.com, LearningApps.org և այլն/ Օգտագործելով մարդկային ռեսուրսները և հնարավորությունները՝ դպրոցում կազմակերպվում են ամփոփիչ դասեր, միջոցառումներ, ինտելեկտուալ խաղ-մրցույթներ, որոնք խթանում են սովորողների ուսումնառության նկատմամբ հետաքրքրությունները, զարգացնում են տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու հմտություններ, նպաստում սովորողների ինքնակրթությանը, տարբեր նախագծերի իրականացմանը:	*Նորարարություններ կիրառում են ոչ բոլոր ուսուցիչները:*

ը/ Դպրոցում առկա հիմնախնդիրները	
• *Շենքային պայմանների բարելավում* • *Գույքային հագեցվածության ապահովում* • *Ուսուցիչների կամավոր ատեստավորման մասնակցություն*	*Արտակարգ իրավիճակներով պայմանավորված ռիսկեր*

3.Նպատակների և խնդիրների սահմանում

ա/Դպրոցի բակային հատվածի վերանորոգում և ցանկապատում

1.Նպատակ	**Դպրոցի բակային հատվածի վերանորոգում և ցանկապատում, բարեկարգ և անվտանգ միջավայրի ապահովում**
2.խնդիր	Իրականացնել դպրոցի բակային հատվածի ասֆալտապատման/ սալիկապատման/ և ցանկապատման աշխատանքներ:
3.գործողություններ	Դիմել Վաղարշապատի համայնքապետարան բակային հատվածի ասֆալտապատման/ սալիկապատման/ և ցանկապատման աշխատանքների աջակցություն ցուցաբերելու հարցով:
4.կատարող	Դպրոց, համակարգող, համայնքապետարան
5.ժամանակացույց	01.06.2023թ.- 01.06.2025թ.
6.պատասխանատուներ	Դպրոցի տնօրեն, համակարգող, համայնքի ղեկավար
7.Արդյունքների գնահատման չափանիշներ	Արդյունքում կունենանք բարեկարգված, վերանորոգված, ցանկապատված, անվտանգ բակ:
8.ռիսկեր	ա/Ֆինանսական ոչ բավարար միջոցների առկայություն, բ/մերժում համայնքապետարանից /մերժման դեպքում դիմել ԿԳՄՄՆ/
9.Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ և նյութատեխնիկական պարագաներ	Ֆինանսական միջոցներ, մետաղական ցանկապատ, ցեմենտ, ավազ,սալիկներ կամ ասֆալտ
10.Վերահսկողության մեխանիզմներ	Իրականացնելով փուլային աշխատանքներ՝ ներկայացնել հաշվետվություններ դպրոցի կառավարման խորհրդին, խորհրդակցական մարմիններին

բ/Գույքային հագեցվածության ապահովում

1. Հանդիսությունների դահլիճի կահավորում

1.Նպատակ	Հանդիսությունների դահլիճի կահավորում
2.խնդիր	Փափուկ աթոռների ձեռքբերում
3.գործողություններ	ա/Ձեռնարկել գործողություններ դպրոցի խնայողությունների հաշվին ձեռք բերելու աթոռներ բ/ Դիմել համակարգողին անհրաժեշտ գույքի ձեռքբերման հարցով
4.կատարող	Տնօրեն, համակարգող
5.ժամանակացույց	01.05.2023թ.-01.05.2024թ.
6.պատասխանատուներ	Տնօրեն, համակարգող
7.Արդյունքների գնահատման չափանիշներ	Կահավորված դահլիճի առկայություն
8.ռիսկեր	Ոչ բավարար ֆինանսական միջոցներ,
9.Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ և նյութատեխնիկական պարագաներ	Թվով 140 աթոռ /1 680 000 ՀՀ դրամ/
10.Վերահսկողության մեխանիզմներ	Ներկայացնել հաշվետվություններ դպրոցի կառավարման խորհրդին, խորհրդակցական մարմիններին

2. Դասասենյակների վերազինում նոր սերնդի հեռուստացույցներով

1.Նպատակ	Դասասենյակների վերազինում նոր սերնդի հեռուստացույցներով

2.խնդիր	Ձեռք բերել նոր սերնդի 2 հեռուստացույց
3.գործողություններ	ա/Ձեռնարկել գործողություններ դպրոցի խնայողությունների հաշվին ձեռք բերելու հեռուստացույցներ բ/ Դիմել համակարգողին անհրաժեշտ գույքի ձեռքբերման հարցով
4.կատարող	Տնօրեն, համակարգող
5.ժամանակացույց	01.06.2023թ.-30.12.2023թ.
6.պատասխանատուներ	Տնօրեն, համակարգող
7.Արդյունքների գնահատման չափանիշներ	Թվով երկու դասասենյակների գույքի արդիականացում
8.ռիսկեր	Ոչ բավարար ֆինանսական միջոցներ,
9.Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ և նյութատեխնիկական պարագաներ	Դասի հետաքրքրությունը և արդյունավետությունը բարձրացնելու նպատակով - թվով 2 հեռուստացույց / շուրջ 500 000 ՀՀ դրամ/
10.Վերահսկողության մեխանիզմներ	Ներկայացնել հաշվետվություններ դպրոցի կառավարման խորհրդին, խորհրդակցական մարմիններին

3. Գույքի համալրում նոր սերդի համակարգիչներով և տպիչ սարքերով

1.Նպատակ	Գույքի համալրում նոր սերդի համակարգիչներով և տպիչ սարքերով

2.խնդիր	Ձեռք բերել նոր սերնդի համակարգիչներ/թվով 12 հատ՝ համակարգչային սենյակի և 4 հատ մանկավարժական և վարչական անձնակազմի / և տպիչ սարքեր / թվով 3 հատ/
3.գործողություններ	ա/Ձեռնարկել գործողություններ դպրոցի խնայողությունների հաշվին ձեռք բերելու համակարգիչներ և տպիչ սարքեր բ/ Դիմել համակարգողին անհրաժեշտ գույքի ձեռքբերման հարցով
4.կատարող	Տնօրեն, համակարգող
5.ժամանակացույց	01.06.2023թ.-01.06.2025թ.
6.պատասխանատուներ	Տնօրեն, համակարգող
7.Արդյունքների գնահատման չափանիշներ	Նոր սերնդի համակարգիչներով, տպիչ սարքերով գույքի համալրում
8.ռիսկեր	Ոչ բավարար ֆինանսական միջոցներ,
9.Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ և նյութատեխնիկական պարագաներ	Մանկավարժական և վարչական անձնակազմի արդյունավետ աշխատանքի համար 4 համակարգչի և 2 տպիչ սարքերի, համակարգչային սենյակի գույքի արդիականացման նպատակով 12 համակարգչի և 1 տպիչ սարքի համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ
10.Վերահսկողության մեխանիզմներ	Ներկայացնել հաշվետվություններ դպրոցի կառավարման խորհրդին, խորհրդակցական մարմիններին

4. Լաբորատոր ենթակառուցվածքների ապահովում

1.Նպատակ	Լաբորատոր ենթակառուցվածքների ապահովում ա/ աշխարհագրության լաբորատորիայի ստեղծում, վերազինում

	բ/ քիմիայի լաբորատոր փորձերի համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերում գ/ ՆԶՊ կաբինետի գույքի թարմացում , հրաձգարանի կահավորում դ/ բուժկետի վերազինում
2.խնդիր	ա/ Ստեղծել աշխարհագրության լաբորատորիա՝ հագեցած անհրաժեշտ դիդակտիկ նյութերով և սարքավորումներով բ/ապահովել քիմիայի լաբորատորիայի նյութերի համալրումը ստանդարտներին համապատասխան անհարաժեշտ նյութերով գ/Իրականացնել ՆԶՊ կաբինետի գույքի թարմացում, ունենալ կահավորված հրաձգարան դ/ ապահովել բուժկետի նյութերի, անհրաժեշտ գույքի թարմացումը
3.գործողություններ	Դիմել ԿԳՄՄՆ աջակցության նպատակով
4.կատարող	Տնօրեն, համակարգող
5.ժամանակացույց	ա/01.05.2023թ.-01.05.2025թ. բ/01.05.2023թ.-01.05.2024թ. գ/01.05.2023թ.-01.05.2024թ.
6.պատասխանատուներ	Տնօրեն, համակարգող
7.Արդյունքների գնահատման չափանիշներ	ա/Համապատասխան գույքային հագեցվածությամբ աշխարհագրության լաբորատորիայի առկայություն բ/ Արդյունավետ գործնական դասերի ապահովում գ/Թարմացված գույքով ՆԶՊ կաբինետի և հրաձգարանի առկայություն դ/ բուժկետի նյութերի, անհրաժեշտ գույքի ձեռքբերում
8.ռիսկեր	Արտակարգ իրավիճակներով պայմանավորված խոչընդոտների ազդեցություն
9.Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ և նյութատեխնիկական պարագաներ	ա/Աշխարհագրության՝ տեսական-գործնական կապերի ապահովման համար անհրաժեշտ նյութեր բ/Քիմիայի լաբորոտորիայում իրականացվելիք փորձերի համար անհրաժեշտ նյութեր գ/ ՆԶՊ կաբինետի համար նախատեսված պաստառներ, գույք/ սեղաններ, աթոռներ, պահարան/ դ/ բժշկական պարագաներ, անհրաժեշտ

	գույք
10.Վերահսկողության մեխանիզմներ	Ներկայացնել հաշվետվություններ դպրոցի կառավարման խորհրդին, խորհրդակցական մարմիններին

գ/ Որակյալ կրթության ապահովում

Կրթության որակի բարձրացման միջոցառումներ

Կրթության որակի բարձրացման համար կատարվել և կատարվում են բազմաթիվ կազմակերպչական, ուսումնական, ռազմահայրենասիրական, դաստիարակչական բնույթի միջոցառումներ, սակայն այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է նաև՝

- Դպրոցում ապահովել ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացումը:
- Հարստացնել առկա ուսումնամեթոդական բազան: Ձեռք բերել ձեռնարկներ, մեթոդական ուղեցույցներ, գեղարվեստական, գիտական գրքեր, ատլասներ, քարտեզներ:
- Մեծ ուշադրություն դարձնել պրակտիկ ունակությունների զարգացմանը, հմտությունների մշակմանը, կարողունակությունների ձևավորմանը, սովորողների ֆիզիկական և ռազմահայրենասիրական դաստիարակությանը:
- Լայնորեն կիրառել դասաժամի արդյունավետությունը բարձրացնող միջոցներ՝ ուսումնադիդակտիկ պարագաներ, էլեկտրոնային նյութեր, պաստառներ, աղյուսակներ, գործիքներ, նյութեր:
- Կիրառել իրավիճակային խնդիրներ, թեստեր, դերային խաղեր, խաչբառեր, խաճանկարներ, համագործակցային ուսուցման մեթոդներ, ստուգատես մրցույթներ և այլ մեթոդներ:
- Համալրել համակարգչային դասարանները, ստեղծել ժամանակակից տեխնիկական միջոցներով հագեցած կաբինետներ:
- Մանկավարժական կազմի դասավանդման որակը բարձրացնելու նպատակով պարբերաբար կազմակերպել վերապատրաստումներ, դասախոսություններ, հարցազրույցներ, կոնֆերանսներ, ուսուցողական և բաց դասեր, կատարել դասալսումներ /նաև փոխադարձ/, մեծ ուշադրություն դարձնել դասավանդողների գնահատման ընթացակարգի կիրառմանը:

1. Ուսուցիչների մասնագիտական որակների բարձրացում

1.Նպատակ	Ուսուցիչների մասնագիտական որակների բարձրացում
2.խնդիր	Ապահովել՝ ա/ ուսուցիչների մասնակցությունը պարտադիր ատեստավորմանը

	բ/ ուսուցիչների մասնակցությունը կամավոր ատեստավորմանը գ/ ուսուցիչների մասնակցությունը ԿԳՄՄՆ կողմից երաշխավորած տարբեր սեմիրնարներին, ֆորումներին և ծրագրերին
3.գործողություններ	Ապահովել ուսուցիչների ընդգրկվածությունը և մասնակցությունը՝ ա/ ուսուցիչների մասնակցությունը պարտադիր ատեստավորմանը բ/ ուսուցիչների մասնակցությունը կամավոր ատեստավորմանը գ/ ուսուցիչների մասնակցությունը ԿԳՄՄՆ կողմից երաշխավորած տարբեր սեմիրնարներին, ֆորումներին և ծրագրերին
4.կատարող	Տնօրեն, մանկավարժական անձնակազմ
5.ժամանակացույց	16.06.2023թ.-16.06.2028թ.
6.պատասխանատուներ	Տնօրեն, մանկավարժական անձնակազմ
7.Արդյունքների գնահատման չափանիշներ	Ուսուցիչների մասնագիտական և անձնային որակների բարձրացում
8.ռիսկեր	Ուսուցիչների ցանկության բացակայություն, ցածր պատասխանատվություն
9.Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ և նյութատեխնիկական պարագաներ	Ֆինանսական միջոցներ,
10.Վերահսկողության մեխանիզմներ	Ներդնել խրախուսման մեխանիզմներ՝ կազմակերպելով դիտարկումներ, շրջայական - փուլային վերահսկողություն:

2. Կազմակերպել նախապատրաստական աշխատանքներ հանրակրթության պետական նոր չափորոշիչներին սահուն անցում կատարելու նպատակով

1.Նպատակ	Կազմակերպել նախապատրաստական աշխատանքներ հանրակրթության պետական նոր չափորոշիչներին սահուն անցում կատարելու նպատակով
2.խնդիր	Հանրակրթության պետական նոր չափորոշիչներին անցման գործընթացում տեղեկատվական իրազեկման աշխատանքների արդյունավետության ապահովում
3.գործողություններ	ա/Ապահովել 10-րդ դասարաններում 2023-2024 ուսումնական տարում

	դասավանդող ուսուցիչների մասնակցությունը վերապատրաստման դասընթացներին բ/Դպրոցում կազմակերպել տեղեկատվական իրազեկման բարձրացման սեմինարներ հանրակրթության պետական նոր չափորոշիչների վերաբերյալ գ/ Կազմել սեմինարների պլան և ժամանակացույց դ/ Սահմանել վերահսկողություն ե/ Իրականացնել վերջնարդյունքի վերլուծություն գնահատում
4.կատարող	Տնօրեն, տնօրենի տեղակալներ, մմ նախագահներ, ուսուցիչներ, ուսուցչի օգնականներ
5.ժամանակացույց	30.05.2023թ. - 31.08.2023թ.
6.պատասխանատուներ	Տնօրեն, տնօրենի տեղակալներ, մմ նախագահներ, ուսուցիչներ
7.Արդյունքների գնահատման չափանիշներ	Հանրակրթության պետական նոր չափորոշիչներով ուսումնական գործընթացի կազմակերպման նպատակով նախապատրաստական աշխատանքները կազմակերպելուց հետո գնահատման միջոցով հետադարձ կապով հասնել վերջնարդյունքների՝ ընտրելով գնահատման չափանիշներ , ցուցանիշներ և ցուցիչներ:
8.ռիսկեր	Մարդկային ռեսուրսներով պայմանավորված կադրային փոփոխություններ
9.Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ և նյութատեխնիկական պարագաներ	Դպրոցի լաբորատոր ենթակառուցվածքների, գրադարանի, ռեսուրս կենտրոնի, համակարգչային սենյակների, ուսումնամեթոդական, տեխնիկական ռեսուրսների նպատակային օգտագործում, որը կբարձրացնի կատարվող աշխատանքների արդյունավետության մակարդակը և որակը:
10.Վերահսկողության մեխանիզմներ	Կատարել իրավիճակի վերլուծություն՝ ապահովելով հետադարձ կապ:

3.Ուսումնադաստիարակչական գործընթացում ապահովել մասնագիտական կողմնորոշման, ուսումնական, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և սոցիալական խնդիրներ ունեցող սովորողների ընդգրկումը

Սովորողների կրթության կառուցվածքի և բովանդակության վերագինում

- *Դպրոցի նորմատիվային ամրապնդում դաստիարակության ոլորտում, սովորողների ուսուցման ու զարգացման ապահովում դպրոցի կրթական ծրագրերի շրջանակներում*
- *Սովորողների իրավունքների պահպանման ապահովում*
- *Ուսուցման կազմակերպում՝ ազգային գաղափարախոսության հենքի վրա*
- *Մեթոդական և դիդակտիկ նյութերով ապահովում*
- *Սովորողներին շահագրգռել կատարելու հետազոտական և նախագծային աշխատանքներ՝ ապահովելով հետազոտությունների կազմակերպման և իրականացման համար նպաստավոր պայմաններ*
- *Սովորողների համար ստեղծել առողջ և բարենպաստ սոցիալ-հոգեբանական մթնոլորտ*
- *Մրցունակ շրջանավարտների պատրաստում շուկայական պահանջներին համապատասխան*
- *Սերմանել հայրենասիրություն, մարդասիրություն, սեր ուսման և աշխատանքի նկատմամբ, բարոյական բարձր հատկանիշներ, հավատ ապագայի նկատմամբ*

1.Նպատակ	*Ուսումնադաստիարակչական գործընթացում ապահովել մասնագիտական կողմնորոշման, ուսումնական, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և սոցիալական խնդիրներ ունեցող սովորողների ընդգրկումը*
2.խնդիր	*Ապահովել՝ ա/մասնագիտական կողմնորոշման, բ/ուսումնական, գ/կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող դ/ սոցիալական խնդիրներ ունեցող սովորողների կանոնավոր կերպով դպրոց հաճախելը, ընդգրկվելը ուսումնադաստիարակչական գործընթացում, աջակցության ցուցաբերումը:*
3.գործողություններ	*Իրականացնել՝ ա/մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ, կողմնորոշում չունեցող սովորողների շրջանում՝ համագործակցելով բուհ- երի, միջին*

	մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ, նպաստել սովորողների այցելություններին բուհ-եր, EXPO- ցուցահանդեսներ և այլն բ/ուսումնական խնդիրներ ունեցող սովորողների հետ լրացուցիչ աջակցություն դասավանդող ուսուցիչների, ուսուցչի օգնականների կողմից, գ/կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կարիքների գնահատում, աջակցություն դ/ սոցիալական խնդիրներ ունեցող սովորողների կանոնավոր կերպով դպրոց չհաճախելու, ուսումնադաստիարակչական գործընթացում չընդգրկվելու, խնդիրների բացահայտման և կարգավորման աշխատանքներ՝ ապահովելով ուսումնառության շարունակականությունը
4.կատարող	Մանկավարժական անձնակազմ
5.ժամանակացույց	16.06.2023թ.-16.06.2028թ.
6.պատասխանատուներ	Տնօրեն, մանկավարժական անձնակազմ, ծնողներ /օրինական ներկայացուցիչներ/
7.Արդյունքների գնահատման չափանիշներ	Ուսումնադաստիարակչական գործընթացում մասնագիտական կողմնորոշման, ուսումնական, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և սոցիալական խնդիրներ ունեցող սովորողների ընդգրկում
8.ռիսկեր	Սոցիալական խնդիրներով պայմանավորված սովորողների աշխատելը, ուսման նկատմամբ անտարբեր վերաբերմունքը
9.Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ և նյութատեխնիկական պարագաներ	Դպրոցի ռեսուրսներ
10.Վերահսկողության մեխանիզմներ	Դպրոց- ծնող, ՏՄԱԿ, բուհ սերտ համագործակցություն, հետադարձ կապի ապահովում, իրավիճակի բարելավում

Դպրոցում ուսումնադաստիարակչական բարենպաստ միջավայրի ստեղծումը կնպաստի սովորողների.

- *Սոցիալականացմանը, նրանց հոգևոր, բարոյական և ֆիզիկական զարգացմանը:*
- *Որակյալ կրթություն ստանալուն:*
- *Սովորողների տարբեր միջոցառումներին ընդգրկմանը և մասնակցությանը:*
- *Երեխաների առողջության մասին տեղեկատվության մշակմանը:*
- *Մասնագիտական կողմնորոշմանը:*

4. Չափորոշիչային կրթության ապահովում

1.Նպատակ	*Չափորոշիչային կրթության ապահովում*
2.խնդիր	*ա/ Չափորոշիչային պահանջներին համապատասխան դասերի պլանավորում և իրականացում* *բ/ Նախագծային աշխատանքների պլանավորում, նախապատրաստում, փոխհամագործակցություն, պաշտպանություն* *գ/ Սովորողների մասնակցությունը առարկայական օլիմպիադաներին, մրցույթներին, ինտելեկտուալ խաղերին, աշխատաժողովներին*
3.գործողություններ	*Ապահովել սովորողների ընդգրկվածությունը և մասնակցությունը՝* *ա/ չափորոշիչային պահանջներին համապատասխան դասապրոցեսներին* *բ/ Նախագծային աշխատանքների պլանավորման, նախապատրաստման, պաշտպանության աշխատանքներին* *գ/ դպրոցականների առարկայական օլիմպիադաներին, մրցույթներին, ինտելեկտուալ խաղերին, աշխատաժողովներին*
4.կատարող	*Մանկավարժական անձնակազմ , սովորողներ*
5.ժամանակացույց	*16.06.2023թ.-16.06.2028թ.*
6.Պատասխանատուներ	*Տնօրեն, մանկավարժական անձնակազմ*
7.Արդյունքների գնահատման չափանիշներ	*Ունենալ առավելագույն ընդգրկվածություն, մասնակցություն, ձեռքբերումներ և արդյունքներ*
8.Ռիսկեր	*Սովորողների տարիքային առանձնահատկություններով պայմանավորված ցածր մասնակցության ցուցանիշ*
9.Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ և	*Դպրոցի ռեսուրսներ*

նյութատեխնիկական պարագաներ	
10.Վերահսկողության մեխանիզմներ	Ներդնել խրախուսման մեխանիզմներ՝ կազմակերպելով դիտարկումներ, շղթայական - փուլային վերահսկողություն:

/Ապահովել ծրագրի վերահսկողությունը տարեկան առնվազն երկու անգամ յուրաքանչյուր կիսամյակի վերջում դպրոցի կառավարման խորհրդի կողմից նախապես մշակված հաշվետվությունների ձևերին և ժամանակացույցին համապատասխան/:

Հիմախնդիրների լուծման եղանակը դպրոցի Զարգացման ծրագրի միջուկն է, այն գաղափարն է բովանդակության որոշման համար: Որպես կանոն՝ եղանակները կարող են լինել մի քանիսը: Կարևոր է ընտրել խնդրի լուծման առավել նպատակահարմար տարբերակը:

Նպատակների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է ունենալ միջնաժամկետ ռազմավարական ծրագրեր, առաջ քաշել հիմնախնդիրներ, որոնք հնարավորություն կտան համեմատաբար փոքր ներդրումներով տալ առավելագույն արդյունք և նպատակաուղղված ձևով հասնել դպրոցի առաքելության իրականացմանը:

ՄԱՍ 2

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ

Ռիսկերը ցանկացած նպատակադրման իրականացումը խոչընդոտող հնարավոր անցանկալի գործոններն են: Դպրոցի Զարգացման ծրագրում հնարավոր ռիսկերի պլանավորումը կարևոր է, քանի որ առանց ռիսկերի հաշվառման ամենալավ մշակված ծրագիրն անգամ դժվար է իրականացնել. այն կարող է լինել խոչընդոտ ակնկալվող արդյունքների արձանագրման համար:

ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Դպրոցում կատարվող աշխատանքների կառավարման որակը բարձրացնելու համար անհրաժեշտ է ստեղծել գնահատման այնպիսի համակարգ, որի անմիջական աջակցողները պետք է լինեն դպրոցում կրթական գործընթացի մասնակիցները՝ սովորողը, սովորողի ծնողը, ուսուցիչը և մանկավարժական այլ աշխատողներ, վարչական աշխատողները, կոլեգիալ կառավարման խորհուրդը, խորհրդակցական մարմինները, շահագրգիռ անձինք: Այն դպրոցի կառավարումը կդարձնի ավելի թափանցիկ և արդյունավետ: Դրա համար անհրաժեշտ է էլ ավելի զարգացնել նրանց գործունեությունը և բարձրացնել նրանց դերը:

Դպրոցում ուսումնական գործընթացն իրականացնել դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների , մանկավարժների, սովորողների և ծնողների փոխադարձ վստահության պայմաններում:

ա/ Կառավարման խորհրդի դերի բարձրացումը դպրոցի հետ համագործակցության արդյունքում

Դպրոցի գործունեությունը թափանցիկ և արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է ապահովել օրենսդրությամբ սահմանված դպրոցի խորհրդի լիազորությունների և իրավունքների պահպանումը և իրականացումը բոլոր ուղղություններով:

բ) Ծնողական խորհուրդի հետ համագործակցության բարելավում

Սովորողների կրթության զարգացման գործում զգալի ներդրում ունեն ծնողները: Ամենօրյա աշխատանքի արդյունքում անհրաժեշտ է ձեռք բերել փոխադարձ վստահություն, ծնողական խորհրդին ընդգրկել ուսման կարևորագույն գործառույթներում՝ ապահովելով.

- *Ծնողի և դպրոցի միջև կապերի ամրապնդում*

- *Ծնողների և մանկավարժական կոլեկտիվի կողմից երեխաների դաստիարակության հարցում միասնական պահանջների ձևավորում*
- *Մասնակցել արտադպրոցական և արտադասարանական դաստիարակչական աշխատանքներին*
- *Ամրապնդել ծնողական խորհրդի կապը դպրոցի կառավարման խորհրդի և մանկավարժական խորհրդի հետ՝ ապահովելով տեղեկատվության կազմակերպումը և տարածումը*
- *Աջակցել ծնողական խորհրդի աշխատանքների կազմակերպմանը, ստեղծել դպրոցի սովորողների <<Սոցիալական անձնագիր>>:*
  Այդ նպատակով ճշտել՝
    - *դպրոց հաճախող այն աշակերտների թիվը, որոնք սոցիալապես անապահով են*
    - *միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ աշակերտների թիվը*
    - *զոհված ազատամարտիկ ծնողներ ունեցող աշակերտների թիվը*
    - *հաշմանդամ աշակերտների վերաբերյալ տեղեկատվություն*
    - *ծնողների խնամքից զրկված աշակերտների թիվը*
    - *միայնակ մոր խնամքի տակ գտնվող աշակերտների մասին տվյալները*
    - *աշակերտների թիվը, որոնց ծնողները հաշմանդամ են*
- *կազմակերպել հանդիպումներ, սեմինարներ ծնողների համար, որտեղ կքննարկվեն դպրոցի գործունեության վիճակը, հեռանկարային ծրագրերը, ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման հարցերը*
- *ծնողներին մասնակից դարձնել սովորողների ուսուցման, դաստիարակության գործընթացին*
- *ծնողներին ներգրավել արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներին*
- *ապահովել ծնողներին տեղեկատվությամբ, կազմակերպել խորհրդատվություններ :*

գ/ Աշակերտական խորհրդի հետ համագործակցության բարելավում

Սովորողների ինքնավարության և ինքնակառավարման նպատակով դպրոցում պետք է էլ ավելի ակտիվացնել աշակերտական խորհրդի գործունեությունը՝ մասնակից դարձնելով որոշումների կայացմանը, ապահովելով կարծիքների ազատ արտահայտումը:

- *Բարձրացնել դպրոցի աշակերտական խորհրդի գործունեության արդյունավետությունը*
- *Բարձրացնել դպրոցի աշակերտական խորհրդի դերը ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքներում*
- *Աշակերտական խորհրդին տալ լիազորություններ՝ աշակերտների ինքնավարության միջոցով*

- *Ինքնավարությունը պետք է արտահայտվի աշակերտների ինքնադրսևորմամբ, կարծիքի ազատ արտահայտմամբ*
- *Ամրապնդել աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-ծնող, աշակերտ-համայնք հարաբերությունները*
- *Ինքնավարությունը պետք է արտահայտի և ապահովի աշակերտների իրավունքների պաշտպանությունը*
- *Աշակերտական ինքնավարության միջոցով ապահովել աշակերտների կրթությունը և ինքնակրթությունը, նպաստել նրանց համակողմանի զարգացմանը:*

դ/ Հոգեբարձուների և այլ խոհուրդների ձևավորում

Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու համար անհրաժեշտության դեպքում ստեղծել հոգաբարձուների և այլ խորհուրդներ:

- *Խորհրդի կազմում ընդգրկել դպրոցի գործունեությամբ շահագրգիռ անձանց, անհատ ձեռներեցների, տեղական իշխանության ներկայացուցիչների*
- *Նրանց ներգրավել դպրոցի համար ֆինանսական միջոցների հայթայթման, նյութատեխնիկական բազայի ամրապնդման, արտաբյուջետային ֆոնդի ձևավորման աշխատանքներին*
- *Գտնել բարերարներ, ովքեր ներդրումներ և նվիրատվություններ կկատարեն*
- *Գործընթացը պետք է լինի առավել թափանցիկ և մատչելի՝ բարերարի, դպրոցի և տեղական ինքնակառավարման ու լիազոր մարմինների համար:*

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Դպրոցի Զարգացման ծրագիրը ենթադրում է որոշակի ֆինանսական ծախսեր: Շատ հաճախ դպրոցի խնդիրները առաջանում են ֆինանսական միջոցների պակասից: Ուստի անհրաժեշտ է ճիշտ կողմնորոշվել և իրատեսական պլանավորմամբ հստակ պատկերացնել իրականացման մեխանիզմները և հնարավորությունները:

Ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար տնօրենը պատասխանատու է անհրաժեշտ կարիքները տրամադրելու համակարգողին՝

պահանջվող ծախսերը գնահատելու, նախահաշիվ կազմելու և լիազոր մարմին ներկայացնելու համար:

Դպրոցի լրացուցիչ ֆինանսավորման հնարավորությունները

Դպրոցի ֆինանսական միջոցները գոյանում են պետական բյուջեից և օրենսդրությամբ չարգելվող այլ աղբյուրներից: Պետական բյուջեից ֆինանսավորումը կատարվում է ըստ իրականացվող հանրակրթական ծրագրերի՝ կախված սովորողների թվից:

- *Դպրոցը կարող է մրցույթային հիմունքներով պետական բյուջեից ստանալ լրացուցիչ ֆինանսավորում դպրոցի Կանոնադրությամբ հաստատված դրույթներով:*
- *Ձեռնարկատիրական գործունեությունը դպրոցի համար լրացուցիչ ֆինանսավորման աղբյուր է: Դպրոցը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝*

1) լրացուցիչ հանրակրթական ծրագրերի իրականացում.

2) համակարգչային ծրագրերի և լեզուների լրացուցիչ ուսուցման կազմակերպում.

3) ուսումնաարտադրական գործունեության ծավալում և արտադրանքի իրացում.

4) արտադպրոցական դաստիարակության կազմակերպում.

5) սովորողների սննդի կազմակերպում և սննդի կազմակերպման համար դպրոցահեն այգիների ու ջերմոցների ստեղծում, որը նպատակաուղղված է նաև գործնական և նախագծային աշխատանքների իրականացմանը և սովորողների մոտ ձեռնարկատիրական հմտությունների զարգացմանը:

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցի Զարգացման ծրագրի գնահատումը ծրագրի գործողություններով պլանավորած և իրականացված արդյունքների համեմատման գործընթացն է: Որպես գնահատման գործիքներ պետք է ծառայեն յուրաքանչյուր գործողության առանձնահատկությունից բխող ցուցանիշները, որոնց միջոցով պետք է չափվեն ակնկալիքների կատարողականները, այլ կերպ ասած, դպրոցի Զարգացման ծրագրին իրականացնող ու վերահսկող շահառուները (դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինները)՝ գործողությունների արդյունքների բավարարվածության աստիճանը: Ցուցանիշները ամբողջացնում, ամփոփում են մեծ ծավալի վիճակագրական տվյալները և տալիս են իրավիճակի ընդհանուր պատկերը: Ցուցանիշները անհրաժեշտ են նաև ժամանակի ընթացքում դպրոցի գործունեության

մեջ տեղի ունեցող փոփոխությունները, ուղղությունները բացահայտելու և գնահատելու համար:

<<Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքով նախատեսված է դպրոցի գործունեության գնահատման մեխանիզմը:

Ուսումնական հաստատության գործունեությանը տրվում է ներքին և արտաքին գնահատական:

Ներքին գնահատումը դպրոցի կողմից իր գործունեության վերլուծությունն է: Ներքին գնահատմանը մասնակից դարձնել վարչական և մանկավարժական աշխատողներին, սովորողներին և ծնողներին:

Ուսումնական հաստատության ներքին և արտաքին գնահատումն ուղղորդել սովորողին մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացմանը:

Դպրոցի Զարգացման ծրագրի վերահսկողությունը իրականացնում է դպրոցի խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրությանը համապատասխան:

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողության արդյունավետ միջոցառումներ են.

1. *Դպրոցի կառավարման խորհրդի կողմից սահմանված կարգով դպրոցի Զարգացման ծրագրի դրույթների ժամանակացույցով սահմանված տարեկան գործողությունների կատարողականների ամենամյա հաշվետվությունների քննարկումը, համապատասխան գնահատականների և եզրակացության ամրագրումը:*
2. *Դպրոցի կառավարման խորհրդի կողմից տնօրենին խորհրդատվական և այլ աջակցության շարունակական տրամադրումը:*
3. *Համակարգողի, համայնքի և դպրոցի այլ շահառուների՝ դպրոցի Զարգացման ծրագրի իրականացման աշխատանքներին կամ այդ շրջանակում կազմակերպված միջոցառումներին շարունակական ներգրավումը:*

<<Կրթությունը ամենահզոր զենքն է, որը դու կարող ես օգտագործել աշխարհը փոխելու համար ... >>

Նելսոն Մանդելա

Փոխե՛նք աշխարհը միասին

Օգտագործած գրականություն

1. *ՀՀ կրթության մինչև 2030 թ. զարգացման պետական ծրագիր*
2. *ՀՀ հանրակրթության պետական չափորոշիչ*
3. *ՀՀ <<Հանրակրթության մասին>> օրենք*
4. *<<Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> ՊՈԱԿ օրինակելի կանոնադրություն*